


«Խրուշչովյան հալոցքը» և այլախոհության առաջացումը ԽՍՀՄ-ում 1950-60-ական թթ.

Հարությունյան Շահեն Շ.

Երևանի պետական համալսարան, Պատմության ֆակուլտետի
Հայոց պատմության ամբիոնի հայցորդ (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0009-0007-8494-1113>
sh.harutyunyan.edu@gmail.com

ՀՏԳ՝ 930; EDN: ZMJMEA

DOI: 10.58587/18292437-2024.4-71

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ «Խրուշչովյան հալոցք», ԽՍՀՄ, «անձի պաշտամունք», ԽՄԿԿ 20-րդ համագումար, այլախոհություն, Սառը պատերազմ, քաղաքական բռնաճնշումներ, Կոմունիստական գաղափարախոսություն

"The Khrushchev Thaw" and the Emergence of Dissent in the USSR during the 1950s-1960s

Harutyunyan Shahen Sh.

Yerevan State University, Department of History Chair of the History Ph.D. student (Yerevan, RA)

Abstract. This article explores the internal socio-political developments within the USSR following Stalin's demise, famously termed as the "Khrushchev Thaw." During Khrushchev's tenure, a new political trajectory emerged, coinciding with the appearance of dissident voices across the Soviet Union, increasing notably within its various republics.

To achieve this objective, the study incorporates a review of the years preceding Khrushchev's leadership, the backdrop of the Cold War tensions between the USSR and the Western bloc, and pivotal moments such as Khrushchev's address at the 20th Congress of the Communist Party of the Soviet Union.

The analysis concludes that Khrushchev's denunciation of the "cult of personality" at the 20th Congress, coupled with escalating Cold War hostilities and the diminishing influence of Communist ideology, catalyzed conditions conducive to dissent. This dissent rapidly gained momentum across the Soviet republics, evolving into organized movements by the 1960s, representing diverse ideological orientations. Despite relentless and severe state repression, dissent persisted until the eventual dissolution of the Soviet Union.

Keywords & phrases: "Khrushchev Thaw", "cult of personality", 20th Congress of the CPSU, dissent, Cold War, Communist ideology, political repression, USSR

"Хрущевская оттепель" и формирование диссидентского движения в СССР в 1950-1960-е годы

Арутюнян Шаген Ш.

соискатель кафедры истории факультета истории,
Ереванский государственный университет (Ереван, РА)

Аннотация. В данной статье исследуются внутренние социально-политические процессы в СССР после смерти Сталина, известные как "Хрущевская оттепель". В период правления Хрущева вырисовалась новая политическая траектория, параллельно с которой произошло появление голосов диссидентов по всему Советскому Союзу, особенно активизировавшихся в различных республиках Советского Союза.

Для достижения этой цели исследование включает обзор предшествующих годам правления Хрущева, фон Холодной войны между СССР и западными странами, а также ключевые события, такие как выступление Хрущева на XX съезде Коммунистической партии Советского Союза.

Анализ указывает на то, что осуждение Хрущевым "культ личности" на XX съезде в сочетании с нарастающими напряженностями в Холодной войне и ослаблением влияния коммунистической идеологии стали катализатором для возникновения условий, благоприятствующих диссидентству. Эти проявления диссидентства быстро нашли поддержку в различных республиках Советского Союза, превращаясь в организованные движения к 1960-м годам, представляющие разнообразные идеологические направления. Несмотря на бескомпромиссные и жестокие репрессии со стороны государственных органов, диссидентство продолжало существовать до окончательного распада Советского Союза.

Ключевые слова и словосочетания: "Хрущевская оттепель", "культ личности", XX съезд КПСС, инакомыслие, Холодная война, коммунистическая идеология, политические репрессии, СССР

Նախաբան

Խորհրդային վարչակարգը Ռուսական կայսրության նախկին տարածքում ի հայտ եկավ 1917 թ. տեղի ունեցած Հոկտեմբերյան հեղափո-

խության արդյունքում Վլադիմիր Լենինի գլխավորությամբ: Սա մի նոր իրողություն էր, որն իր հետ առաջ քաշեց կոմունիստական գաղափարախոսությունը [9, էջեր 35-42]: Կոմունիզմը՝

որպես գաղափարախոսություն, խորթ երևույթ էր Ռուսաստանում ապրող ժողովուրդների համար և, բնականաբար, ոչ միանշանակ ընդունվեց թե՛ Ռուսաստանում, թե՛ տարածաշրջանում, թե՛ աշխարհում: Այն սկզբնական շրջանում միանգամից հանդիպեց դիմադրության: 1917-1922 թթ. Ցարական Ռուսաստանի փլատակների մեջ սկսվում է ռուսական քաղաքացիական պատերազմը, որը համաշխարհային պատմության էջերում ամրագրված է սպիտակ և կարմիր բանակների միջև պատերազմ [5, էջ 17]:

Ռուսական քաղաքացիական պատերազմն ավարտվում է Բոլշևիկյան ուժերի հաղթանակով, որի արդյունքում կազմավորվում է ԽՍՀՄ-ը [18, էջեր 117-123]: Թվում էր, թե տարիների ընթացքում տարածաշրջանի երկրների ժողովուրդները, որոնք դարձան ԽՍՀՄ-ի միութենական հանրապետություններ, հանդուրժող կղառնան և կընդունեն այս նոր գաղափարախոսությունն ու խորհրդային վարչակարգը: Բայց, ինչպես ցույց է տալիս Խորհրդային կայսրության պատմությունը, Բոլշևիկյան իշխանությունները և Կոմունիստական գաղափարախոսությունը, մշտապես եղել են ապստամբությունների և հակադրությունների շարժառիթ: Սկզբնական շրջանում իշխանությունները կարողանում էին բռնությունների, սպանությունների, վայրագությունների միջոցով դիմադրել բոլոր հակախորհրդային դրսևորումները: Այս ամենի ցայտուն օրինակն է Խորհրդային իշխանությունների կողմից 1932-1933 թթ. Ուկրաինայում կազմակերպված արհեստական սովը, որը պատմության մեջ հայտնի է «Հոլոդոմոր» անունով [6]:

Խորհրդային հալածանքների քաղաքականության բարձրակետը «Ստալինիզմի» ժամանակաշրջանն էր [7, էջ 14], երբ պատմության էջերում ընդմիջտ գրվեց Խորհրդային ժամանակաշրջանի ամենաարյունալի էջերից մեկը: Կոմունիստական կուսակցության գլխավորությամբ երկրում իրականացվում էր համատարած բռնաճնշումներ, որոնք ամենազանգվածային բնույթը կրեցին մասնավորապես 1930-1950-ական թթ.: Այս ժամանակաշրջանում բազմա-հազար մարդիկ կա՛մ գնդակահարվում էին, կա՛մ ընտանիքներով արքտրվում, կա՛մ էլ կյանքի մեծ մասն անցկացնում բանտերում [13, էջ 283]:

Այսպիսին էր Խորհրդային Միության ներքին դրությունը սկզբնավորման շրջանից մինչև 20-րդ դարի երկրորդ կեսը: Հարկ է նշել, որ, ճիշտ է, միութենական հանրապետությունների ժողովուրդները, մեծամասամբ, խորհրդային կարգերի օրոք ապրել են հնազանդ և հանդուրժող, բայց գրեթե բոլոր հանրապետություններում եղել են դիմադրություններ, որտեղ անհնազանդ շրջանակները չեն ցանկացել

ենթարկվել կոմունիստական կարգերին և ձգտել են դեպի ազատություն:

ԽՍՀՄ հասարակական-քաղաքական տրամադրությունները 20-րդ դարի 50-60-ական թթ.

Խորհրդային Միությունում էական փոփոխություններ են նկատվում 1953 թվականին, երբ մահանում է Իոսիֆ Ստալինը, քանի որ, ինչպես արդեն նշել ենք, ամենադաժան բռնաճնշումները եղել են վերջինիս օրոք և անմիջական ղեկավարությամբ: Ստալինի կառավարման տարիներին տոտալիտար համակարգին զուգահեռ, Խորհրդային ժողովուրդներին պարտադրված էր ընդունել «անձի պաշտամունքը» [10, էջ 24]: Սա հավելյալ հալածանքների և զրկանքների առիթ էր ԽՍՀՄ ժողովուրդների համար, և լավ հնարավորություն, ցանկացած մարդու նկատմամբ իրականացնելու հետապնդումներ, որոնք ինչ-որ մի կերպ արտահայտում էին իրենց ամենաչնչին դժգոհությունը ղեկավարության վարած քաղաքականության վերաբերյալ: Ստալինի ղեկավարման տարիները պատմությանը հայտնի են իրենց դաժանությամբ, ժողովուրդների նկատմամբ մեծ հալածանքներով և հետապնդումներով, և բնական է, որ Ստալինի մահը պետք է էական փոփոխություններ առաջացներ ԽՍՀՄ վարած քաղաքականության մեջ:

Ի. Ստալինին փոխարինեց Գեորգի Մալենկովը, այնուհետև նրան հաջորդեց Նիկիտա Խրուշչովը: ԽՍՀՄ-ը նոր ղեկավարության օրոք՝ Նիկիտա Խրուշչովի գլխավորությամբ, որդեգրում է ավելի մեղմ քաղաքականություն, որը պատմության մեջ հայտնի է «Խրուշչովյան հալոցք» անունով [4, էջ 174]: 1956 թվականին կայացած ԽՄԿԿ 20-րդ համագումարում, Խրուշչովը հանդես է եկել զեկույցով՝ «անձի պաշտամունքի և դրա հետևանքների մասին»՝ քննադատելով Ստալինյան քաղաքականության ժամանակաշրջանը, ըստ էության, ազդարարելով նոր՝ ավելի մեղմ, քաղաքական կուրսի մասին [16, էջ 3]: Սակայն, անհրաժեշտ է հստակ ընդգծել, որ ավելի մեղմ քաղաքականությունը վերաբերում էր առավելապես Ստալինի կառավարման վերջին տարիներին: «Ստալինիզմից» ձերբազատվելը, «անձի պաշտամունքի» վերացումը, «ժողովրդի թշնամի» քրեական հողվածի չեղարկումը, չէր նշանակում փոխել ԽՍՀՄ գաղափարախոսությունը կամ քաղաքական բռնապետական համակարգը: Այն շարունակում էր մնալ այլակարծության և նոր գաղափարների անհաշտ թշնամին: Հասարակական-քաղաքական կյանքի վրա կուսակցական վարչակարգի համընդհանուր վերահսկողությունը մնաց անփոփոխ: Խորհրդային մարդկանց համար շարունակում էին պարտադիր մնալ կուսակցության և կառավարության գաղափարախոսական

հանձնարարականները: Բոլոր այն մարդիկ, ովքեր որևէ կերպ խախտում էին հանձնարարականները՝ ընկնում էին անախորժությունների մեջ, հաճախ նաև բանտարկվում: Ավելի խիստ պատժամիջոցներ էին կիրառվում այն անձանց նկատմամբ, ովքեր պայքարում էին մայրենին և ազգային ինքնությունը պահպանելու, առավել ևս անկախ պետականություն ունենալու համար [2, էջեր 136-137]: Հենց այս ամենի ցայտուն օրինակն է 1956 թվականի հունգարական իրադարձությունները, երբ Խորհրդային զորքերն արյան մեջ խեղդեցին հունգարացիների ըմբոստությունն ու ազատության համար պայքարը [11, էջ 51]:

ԱՄՆ ԿՀՎ ղեկավար Ալեն Դալլեսը «ЦРУ против КГБ. Искусство шпионажа» աշխատության մեջ նշում է, որ քաղաքական ընդդիմադիրների, երկրից դուրս գտնվող արտագաղթյալների նկատմամբ բռնաճնշումները և սպանությունները շարունակվում էին նաև Ստալինի մահից հետո՝ անգամ 1956 թ. խրուշչովյան ժամանակաշրջանում: Դալլեսը նշում է. «Չպետք է կարծել, որ 1930-40-ական թթ. տեղի ունեցած սպանությունները Ստալինի կասկածամտությամբ և վրեժխնդրությամբ էին պայմանավորված: Սպանությունների քաղաքականությունը շարունակվեց նաև հետագա տարիների ընթացքում, երբ հանցագործները օգտագործում են մարդկանց բնաջնջելու ավելի բարդ և արդյունավետ միջոցներ» [15, էջ 148]:

ԻՍՀՄ փլուզումից հետո, մասնավորապես արդի ժամանակաշրջանում, Խորհրդային Միության իրավահաջորդ՝ Ռուսաստանի Դաշնությունում, ռուսական ծավալապաշտական քաղաքականության և ռուսական կայսրության վերականգնման, կամ պահպանման կողմնակիցները, խիստ քննադատաբար, ընդհուպ մինչև թշնամաբար են մոտենում 1956 թվականին կայացած ԽՍՀՄ 20-րդ համագումարում Խրուշչովի ելույթին: Այսպես, ռուս հայտնի գրող Ալեքսանդր Ծիրոկորադն իր «Диссиденты 1956-1990 гг.» աշխատության սկզբում Նիկիտա Խրուշչովին համարում է ԻՍՀՄ-ի առաջին այլախոհը: Այս մասին Ծիրոկորադը գրում է. «ԻՍՀՄ-ում առաջին այլախոհը դարձավ Նիկիտա Խրուշչովը: Ընդ որում, ոչ թե այլակարծության, զարգացման այլ ընթացք առաջարկող, այլ թշնամի, պետությունը կործանող: Հենց նրա զեկույցը ԽՍՀՄ 20-րդ համագումարում ավելի շատ վնաս հասցրեց ԻՍՀՄ-ին, քան ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի երկրների քարոզչությունը նախորդ 10 տարիներին» [17, էջ 5]:

ԻՍՀՄ ՊԱԿ-ի քաղաքական հակահետախուզության 5-րդ վարչության առաջին ղեկավար Ֆիլիպ Բոբկովը «Как бороться с агентами влияния» աշխատության մեջ, անդրադառնալով ԽՍՀՄ կենտոմի 20-րդ համագումարին, նշել է, որ դա «դարի համագումարն էր»: Ըստ հեղի-

նակի, Ստալինի մահին հաջորդած երեք տարիների ընթացքում Խրուշչովին հաջողվել է վերջնականապես «սպանել» Խորհուրդների դերը բոլոր մակարդակներում, որն այժմ պատկանում էր կուսակցական մարմիններին: Այնուհետև հեղինակը նշում է, որ իշխանությունը անպատասխանատու էր, քանի որ պատասխանատու չէր ժողովրդի առաջ [14, էջ 95]:

Հետստալինյան ժամանակաշրջանի և «Խրուշչովյան հայոցքի» քաղաքականությանը զուգահեռ, 1950-ական թթ. Խորհրդային կայսրության և Արևմտյան բևեռի միջև ընթացող Սառը պատերազմը նոր շրջափուլ է մտնում, որը մեկնարկել էր դեռևս 1946 թ. [3, էջ 23]: Երկու աշխարհաքաղաքական բևեռների միջև ընթացող այս հակամարտությունը իր մեջ ընդգրկում էր ռազմաքաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային, տեղեկատվական մրցակցությունը: Սակայն Սառը պատերազմի գլխավոր առանցքը գաղափարախոսական հակամարտությունն էր ազատության և բռնապետության հակադրությունը:

«Խրուշչովյան հայոցքի» ժամանակաշրջանում, թեև պահպանվում էր Խորհրդային տոտալիտար, միակուսակցական համակարգը, այնուամենայնիվ, Խորհրդային հասարակություններում նկատելի են դառնում նոր գաղափարների տարածումը: Խորհրդային կայսրության և Արևմտյան բևեռի միջև ավելի է սաստկանում Սառը պատերազմի առանցքում գտնվող գաղափարախոսական, տեղեկատվական, մշակութային հակամարտությունը, որոնք էլ նոր գաղափարական և արժեհամակարգային ճաքեր են ստեղծում ԻՍՀՄ-ում՝ ավելի շիկացնելով հասարակական տրամադրությունները:

ԻՍՀՄ կազմավորումից սկսած, Խորհրդային վերահսկողության տակ գտնվող երկրներում մշտապես եղել են դիմադրության օջախներ, որոնք ունեցել են տարբեր դրսևորումներ: Սակայն, Խորհրդային Միությունում 1960-ականներից շիկացած հասարակական տրամադրությունները, որոնք օբյեկտիվորեն նախադրյալ էին դառնում պետական գաղափարախոսությանը հակասող արժեքների և գաղափարների մասին մտորումների համար, առաջացրեցին նոր իրավիճակ, որը խորթ էր Խորհրդային իրականության մեջ: Այլակարծությունը և ընդդիմախոսությունը, հետզհետե լայն թափ հավաքելով, տարածվում է կայսրության բոլոր հատվածներում՝ առաջացնելով կազմակերպված դիմադրություններ Խորհրդային կարգերի, արժեքների և պետության դեմ: Այս ժամանակաշրջանում առաջ է գալիս «այլախոհ» տերմինը, որը բնորոշում է այն մարդկանց, ովքեր ազատորեն արտահայտում էին իրենց մտքերն ու կարծիքները, որոնք շատ հաճախ չէին բխում և հակասում էին ԻՍՀՄ շահերին: Զեմբրիջի բա-

ռարանը «այլախոհ» տերմինը բացատրում է «որոշակի թեմաների վերաբերյալ կարծիքների խիստ տարբերություն, հատկապես պաշտոնական առաջարկի, ծրագրի կամ տարածված համոզմունքի վերաբերյալ» [19]: Հիմնականում, այլախոհությունը կարելի է համարել մտավորականության պայքարը Խորհրդային կարգերի դեմ:

1950-60-ական թվականներից այլախոհական շարժումներ են ձևավորվում ռուսական կայսրության տարբեր հատվածներում: Թեև Խորհրդային իշխանությունները խիստ դաժան հալածանքներ և հետապնդումներ են իրականացնում այլախոհների նկատմամբ, այնուամենայնիվ, այլախոհությունը ոչ միայն չի վերանում, այլ ավելի լայն թափով է ընդգրկում Խորհրդային կարգերից և գաղափարախոսությունից դժգոհ շրջանակներին: Այլախոհական շարժման մասնակիցներն իրենց բողոքն ու դժգոհությունն էին հայտնում այս կամ այն հարցի շուրջ: Այլախոհության արմատավորման գուգահեռ, այլախոհները սկսեցին ձևավորել այլախոհական ընդհատակյա կազմակերպություններ, խմբեր, որոնք ավելի կազմակերպված բնույթ հաղորդեցին շարժմանը: Այլախոհական պայքարը, ի թիվս այլ տարածքների, ուժգին կերպով դրսևորվել է ԽՍՀՄ կազմի մեջ մտնող Ուկրաինայում, Հայաստանում, Վրաստանում, Լատվիայում, Լիտվայում, Էստոնիայում [12, էջեր 7-88]:

Խորհրդային տարիների հայտնի այլախոհ Վարդան Հարությունյանը նշում է, որ 1950-ականներին քաղաքական ենթատեքստով դատապարտված մարդկանց, որոնք ազատագրվել են այս կամ այն կերպ, այս կամ այն չափով տիրող համակարգի նկատմամբ իրենց անհամաձայնությունն արտահայտելու պատճառով, արդեն առանց երկմտելու կարող ենք «այլախոհ» անվանել [1, էջ 9]:

Խորհրդային իշխանությունները անհաշտ պայքար մղեցին այլախոհության դեմ, սակայն որքան ուժգնանում էին հալածանքները, այդքան ավելի էր տարածվում այլախոհությունը՝ ավելի մեծացնելով Խորհրդային բռնապետական իշխանություններից դժգոհությունը: Այս համատեքստում տեղին է նշել, որ այլախոհական շարժումների թափ հավաքելուն գուգահեռ 1967 թ. ԽՍՀՄ Պետական անվտանգության կոմիտեի նորանշանակ ղեկավար Յուրի Անդրոպովը նախաձեռնում է քաղաքական հակահետախուզության 5-րդ վարչության ստեղծումը [8, էջ 238]: Այս վարչությունն իր ամբողջ բովանդակությամբ և տրամաբանությամբ ուղղված էր այլախոհների և այլախոհական շարժումների դեմ: Խորհրդային Միությունում այլախոհության դրսևորումները, տարբեր ուժգնությամբ և որոշ վայրիվերումներով, պահպանվեցին մինչև ԽՍՀՄ փլուզումը:

Եզրակացություն

Բոլշևիկյան ուժերը Վ. Լենինի գլխավորությամբ 1917 թ. իրականացրեցին Հոկտեմբերյան հեղաշրջում, այնուհետև հաղթանակ տոնեցին Ռուսական քաղաքացիական պատերազմում (1917-1922 թթ.), որից հետո ձևավորեցին ԽՍՀՄ-ը (1922 թ.): Կոմունիստական իշխանությունները հիմնված էին բռնատիրական կարգերի վրա և Խորհրդային ժողովուրդների նկատմամբ իրականացնում էին հալածանքներ, ձերբակալություններ, սպանություններ, որի գագաթնակետը հասավ 1930-40-ական թթ. «Ստալինիզմի» ժամանակաշրջանում: Սակայն, Ստալինի մահից հետո, երբ Խորհրդային պետության գլուխ է անցնում Նիկիտա Խրուշչովը, որոշակի փոփոխություններ են տեղի ունենում կայսրության ներքին քաղաքականության մեջ: ԽՄԿԿ 20-րդ համագումարում, Ն. Խրուշչովի ելույթը և «անձի պաշտամունքի» դատապարտումը, շիկացնում են Խորհրդային Միության հասարակական-քաղաքական տրամադրությունները՝ պարարտ հող ստեղծելով նոր գաղափարների առաջացման և տարածման համար: Պետության ներքաղաքական որոշ վերադասավորումներին գուգահեռ, ավելի է սրվում Խորհրդային կայսրության և Արևմտյան բևեռի միջև ընթացող Մառը պատերազմը, ինչն էլ իր հերթին նոր ճաքեր է առաջացնում Խորհրդային Միության գաղափարական հիմնայուններում: Հենց այս ժամանակաշրջանում էլ առաջանում է այլախոհությունը, որը գաղափարական հակադրություն է ստեղծում Խորհրդային կարգերի դեմ: Պետությունը, թեև անհաշտ և դաժան բռնություններով լեցուն պայքար է մղում այլախոհների դեմ, սակայն, 1960-ական թթ. սկիզբը առած այլախոհական շարժումները հետզհետե լայն տարածում են գտնում ԽՍՀՄ գրեթե բոլոր հատվածներում և իրենց ներդրումն ունենում Խորհրդային Միության փլուզման գործընթացում:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Հարությունյան Վ.**, Այլախոհությունը Խորհրդային Հայաստանում: - Երևան, Վան Արյան հրատ., 2014:
2. Հայոց Պատմություն, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ. Հատոր IV, գիրք երկրորդ, - Ե., 2016:
3. **Applebaum A.**, Iron Curtain: The Crushing of Eastern Europe, 1944-1956, Knopf Doubleday Publishing Group, 2012.
4. **Bittner S. V.**, The Many Lives of Khrushchev's Thaw: Experience and Memory in Moscow's Arbat, Cornell University Press, 2008.
5. **Brovkin N. V.**, Behind the front lines of the civil war : political parties and social movements in Russia, 1918-1922, Princeton University Press, New Jersey, 1994.

6. **Davies R., Wheatcroft S.**, The Years of Hunger: Soviet Agriculture, 1931–1933, Palgrave Macmillan UK, 2016.
7. **Gill G.**, The Origins of the Stalinist Political System. Cambridge University Press, 1990.
8. **Hornsby R.**, Political Protest and Dissent in the Khrushchev Era. Centre for Russian and East European Studies European Research Institute, 2008.
9. **Hosking G.**, A history of the Soviet Union, 1917-1991. – London: Fontana Press, 1992.
10. **McLoughlin B., McDermott K.**, Stalin’s Terror: High Politics and Mass Repression in the Soviet Union, Palgrave Macmillan UK, 2002.
11. Report of the Special Committee on the Problem of Hungary, General Assembly Official Records: Eleventh Session, Supplement No. 18 (A/3592), New York, 1957, p. 51.
12. **Алексеева Л.**, История инакомыслия в СССР : новейший период, Моск. Хельсинк. Группа. – Москва, 2012.
13. **Блюм А. В.**, Советская цензура в эпоху тотального террора. 1929-1953. – СПб.: Акад. Проект, 2000. – 312 с.
14. **Бобков Ф.**, Как бороться с агентами влияния, Алгоритм. – Москва, 2014.
15. **Даллес А.**, ЦРУ против КГБ. Искусство шпионажа. – Москва: Центрполиграф, 2023.
16. **Хрущев Н.**, Время. Люди. Власть. // Московские новости, 1999.
17. **Широкопад А.**, Диссиденты 1956-1990 гг. – Москва: Алгоритм, 2014.
18. Документы внешней политики СССР. Т. VI. 20 ноября 1922 г.-31 декабря 1923 г. – Москва.
19. Dissent. In Cambridge Dictionary. <https://dictionary.cambridge.org/dictionary/english/dissent>

Сдана/Հանձնվել է՝ 12.07.2024

Рецензирована/Գրախոսվել է՝ 19.07.2024

Принята/Ընդունվել է՝ 26.07.2024